Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

Հավելված 2

«ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ» ԹԵՄԱՅՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ - ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականի ապրիլի 17-ին և 18-ին Երևանում անցկացվեց «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ միջազգային լույսի ներքո» թեմայով կառավարություն-քաղաքացիական հասարակության փորձագիտական միջազգային համաժողովը:

Համաժողովը կազմակերպվել էր Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ու Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) հետ համագործակցությամբ:
Համաժողովի անցկացումը չորս խումբ նպատակներ էր հետապնդում.

- Քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը և ներկայացնել հստակ առաջարկություններ դրա բարելավման համար:
- Ներկայացնել աշխարհում գոյություն ունեցող անկախ հակակոռուպցիոն գործակալությունների/մարմինների տարբեր մոդելներ և ուրվագծել ՀՀ համատեքստին ամենաբնորոշ մոդելի անհրաժեշտ բաղադրիչները:
- Ներկայացնել հակակոռուպցիոն պայքարի միջազգային փորձը՝ կապված իրավապահ գործունեության, ակտիվների վերականգնման, կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթության հետ՝ հակակոռուպցիոն մարմնի, ազդարարման համակարգի, իրական սեփականատերերի և հակակոռուպցիոն համապատասխանության սպեկտրի միջով:
- Մեկտեղել Հայաստանի հիմնական հակակոռուպցիոն դերակատարների տարբեր տեսակետները՝ ներառյալ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնագիտացված կազմակերպությունների, ամասնավոր ոլորտի, և միջազգային գործընկերների՝ երկրում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ

համակարգի ձևավորման և մեխանիզմների գործարկման համար որքան հնարավոր է լայն համախոհություն ապահովելու համար:

Երկօրյա համաժողովի շուրջ 220 մասնակիցները ներկայացնում էին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի մարմինները, միջազգային կազմակերպություններն ու Հայաստանում հավատարմագրված դեսպանությունները, մասնավոր ոլորտը, քաղաքացիական հասարակության կառույցները, փորձագիտական հանրույթն ու ԶԼՄ-ները:

Համաժողովին բացման խոսքով հանդես եկան Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին, Արդարադատության փոխնախարար Տիգրան Խաչիկյանը, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, ՄԱԶԾ Հայաստան, մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիյասինը, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը:

Համաժողովին զեկույցներով հանդես եկան միջազգային փորձագետներ՝ ՄԱԶԾ Գլոբալ ծրագրի հակակոռուպցիոն խորհրդական Անգա Թիմիլսինան, ՄԱԶԾ Գլոբալ հակակոռուպցիոն նախաձեռնության ծրագրի ղեկավար Աիդա Արությունովան, Համաշխարհային բանկի ՄԱԹՀՊԳ գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության (StAR) համակարգողի տեղակալ Շերվին Մաջլեսսին, Լատվիայի հակակոռուպցիոն մարմնի (KNAB) նախկին ղեկավար Յարոսլավս Ստրելչենոկսը, Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի մասին հաղորդումների ծրագրի (OCCRP-Կովկաս) տարածաշրջանային խմբագիր Դեյվիդ Բլոսսը և ՄԱԹՀՊԳ հակակոռուպցիոն կրթության փորձագետ ու Հակակոռուպցիոն ակադեմիական նախաձեռնության ներկայացուցիչ Ալեքս Պետկովը:

Համաժողովին զեկույցներով հանդես եկան նաև ազգային փորձագետներ և մասնագետներ՝ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Սոնա Այվազյանը, ՀՀ փոխվարչապետի խորհրդական Սուրեն Քրմոյանը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հակակոռուպցիոն փորձագետ Խաչիկ Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ Հայկ Մովսիսյանը,

Իրավաբանների հայկական ասոցիացիայի հակակոռուպցիոն փորձագետ Սյուզաննա Սողոմոնյանը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի իրավական հարցերով փորձագետ Հայկ Մարտիրոսյանը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ Էդգար Շաթիրյանը, Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանը, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական քաղաքականության մշակման բաժնի պետի պաշտոնակատար Արփինե Սարգսյանը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ Արկադի Սահակյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման փոխնախարար Լիլիա Շուշանյանը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հակակոռուպցիոն փորձագետ, «Կոռուպցիայի դեմ պայքարի խթանում և բարեփոխումներ. Հայաստան» ծրագրի ղեկավար, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության կրթաթոշակակիր Մարիամ Զաղոյանը, Իրավաբանների հայկական ասոցիացիայի հակակոռուպցիոն փորձագետ Մարատ Ատովմյանը, «Ապագան քոնն է» ՀԿ նախագահ Նարինե Սարգսյանը, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Հայրապետյանը:

Համաժողովի օրակարգում ներառվել էր համաժամանակյա 3 պանելային ամփոփիչ քննարկումներ՝ նպատակ ունենալով գեներացնելու երկօրյա քննարկումների ժամանակ հնչեցված մտքերն ու առաջարկությունները և հստակ առաջարկներ մշակել Հայաստանում իրականացվելիք հակակոռուպցիոն հետագա գործողությունների վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք այդ քննարկումների արդյունքները:

Քննարկում 1. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր և առաջարկություններ

Քննարկումը վարում էին ՄԱԶԾ Գլոբալ ծրագրի հակակոռուպցիոն խորհրդական Անգա Թիմիլսինան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հակակոռուպցիոն փորձագետ Խաչիկ Հարությունյանը:

Քննարկմանը մասնակցում էին ներկայացուցիչներ գործադիր և օրենսդիր իշխանությունից, միջազգային կառույցներից, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունից, այդ թվում՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայից:

Քննարկումը բաղկացած էր հետևյալ երեք մասերից՝ խարսխված լինելով կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական երեք հենասյուների վրա՝

- **Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված առաջարկների հավաքագրում:**
- **Կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ գործունեություն:**
- **Հակակոռուպցիոն կրթություն:**

Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցների կողմից ներկայացված առաջարկություններից ՄԱԶԾ Գլոբալ ծրագրի հակակոռուպցիոն խորհրդական Անգա Թիմիլսինան, քննարկման մյուս մասնակիցների հետ համաձայնությամբ, առաջարկեց ռազմավարության առաջնային և երկրորդային գերակայությունները, որոնք թվարկված են ստորև:

- **Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված առաջարկների հավաքագրում.**

Առաջնային գերակայություններ

1. Կատարել կոռուպցիոն ռիսկերի գնահատում պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում, ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա մշակել և իրականացնել համապատասխան ոլորտային միջոցառումների ծրագրեր, այդ թվում՝ **ներդնել հակակոռուպցիոն ծրագրեր տեղական ինքնակառավարման մարմիններում:**
2. Օրենսդրական կարգավորումներում երկակի մոտեցումների բացառման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով **մշակել և իրականացնել հակակոռուպցիոն**

կարգավորման ազդեցության գնահատման արդյունավետ մեխանիզմներ, դիտարկել հակակոռուպցիոն անկախ փորձագետների ակրեդիտացված համակարգի ներդրման նպատակահարմարությունը:

3. **Մշակել բիզնեսում կոռուպցիոն ռիսկերի նվազմանն ուղղված քայլեր, այդ թվում՝**
   1) **ստեղծել իրական սեփականատերերի ռեգիստր և բոլոր ոլորտներում գործող իրավաբանական անձանց համար սահմանել իրական սեփականատերերի բացահայտման պարտականություն,**
   2) **ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերը մասնավոր հատվածի կողմից որդեգրելուն ուղղված գործուն մեխանիզմներ,**
   3) **վերանայել տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգը,** այդ թվում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառութային և լիազորությունների շրջանակը և կազմավորման կարգը, վերջինիս տրամադրել նոր գործուն լծակներ, այդ թվում՝ անկանոնությունները վեր հանող սքրինինգային համակարգին հասանելիություն,
   4) **նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը պետական գնումների ոլորտում**, այդ թվում՝ լուծում տալ տեխնիկական բնութագրերի՝ կոնկրետ բիզնեսի համար կազմված լինելու արատավոր պրակտիկային:

Երկրորդային գերակայություններ

1. Անդրադառնալ կուսակցությունների ֆինանսավորման խնդրին:
2. Վերանայել պետական համակարգի կադրային քաղաքականությունը:
3. Պետական համակարգում շարունակաբար ներդնել և կատարելագործել թափանցիկության և հրապարակայնության արդյունավետ մեխանիզմներ:

➢ **Կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ գործունեություն.**

Առաջնային գերակայություններ

1. **Ստեղծել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարաններ** և բարձրացնել դատական համակարգի բարեխղճությունը:
2. **Ներդնել ակտիվների վերականգնման ինստիտուտը**, այդ թվում՝ ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ կառուցակարգեր, **սահմանել ակտիվների**

վերականգման քաղաքացիաիրավական ընթացակարգեր և բարելավել միջազգային համագործակցությունը ինստիտուտը:

3. Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել կոռուպցիոն գործեր քննող մարմինների մասնագիտացվածության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ **կարողությունները զարգացնել ապօրինի հարստացման և ակտիվների վերականգնման գործերով:**
4. **Ներդնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը:**
5. Վերանայել ազդարարման համակարգը և **ներդնել ազդարարների խրախուսման ինստիտուտը,** ինչպիսին գործում է ԱՄՆ-ում և Հարավային Կորեայում:

➢ **Հակակոռուպցիոն կրթություն**

Առաջնային գերակայություններ

1. Պետության կողմից **իրականացնել հակակոռուպցիոն իրազեկման արշավներ**՝ միտված կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը և կոռուպցիայի դեմ անհանդուրժողականության սերմանմանը՝
   1) **իրականացնել հասարակության կողմից կոռուպցիայի և բարեխղճության վերաբերյալ գիտելիքների և ընկալման նախնական ելակետային տվյալների հավաքագրում,** որը նպատակ կհետապնդի հասկանալ, թե հասարակության որ մասն է տեղյակ, թե ինչ է կոռուպցիան, որպեսզի հետագայում կարողանա պայքարել կոռուպցիայի դեմ, հասարակության որ մասն է տեղյակ, թե ինչպես ազդարարել, ում ազդարարել և ինչպես հետևել ազդարարման ընթացքին,
   2) կազմակերպել հակակոռուպցիոն համապետական ֆլեշմոբեր, համաժողովներ, մրցույթներ և ճամբարներ և այլն,
   3) հասարակությանը իրազեկել **հակակոռուպցիոն բնույթի կայքերի մասին**, այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից գործարկվող հակակոռուպցիոն կայքի մասին, ազդարարման հարթակների և այլնի մասին:
2. **Նախադպրոցական և հանրակրթական հաստատություններում իրականացնել էթիկայի, բարեխղճության և հակակոռուպցիոն թեմաների ուսուցում՝** հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, այդ թվում՝ իրականացնել հակակոռուպցիոն թատերական ներկայացումներ, պատրաստել մուլտֆիլմներ և խաղեր և վերանայել

«Հասարակագիտություն» առարկայի դասագիրքը, որը շատ հպանցիկ է անդրադառնում կոռուպցիայի թեմային:

3. **Բարձրագույն ուսումնական և մասնագիտական կրթության հաստատություններում իրականացնել հակակոռուպցիոն, էթիկայի և բարեխղճության ուսուցումներ,** այդ թվում՝ նախատեսել բարեխղճության և հակակոռուպցիոն դասաժամեր, որոնք կլինեն պարտադիր առնվազն «Իրավաբանություն/իրավագիտություն» առարկան ուսուցանելիս, ստեղծել հակակոռուպցիոն լաբորատորիաներ, ուսանողական խորհուրդներում իրականացնել համապատասխան հակակոռուպցիոն վերապատրաստումներ, կազմակերպել հակակոռուպցիոն գիտաժողովներ և այլն:

Երկրորդային գերակայություններ

1. Պետական բյուջեի հաշվին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար պարբերաբար կազմակերպել և իրականացնել հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումներ, այդ թվում՝ պետական գնումների, պետական բյուջեի, պաշտոնատար անձանց կողմից ներկայացված գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության թեմաներով:

Բացի վերոնշյալ ուղղություններից, քննարկման բոլոր մասնակիցները միաձայն առաջարկել են **նախագծով հստակ սահմանել չափելի ցուցիչներ և միջոցառումների կատարման թիրախներ ռազմավարության բոլոր միջոցառումների համար:**

Քննարկում 2. Հայաստանում հակակոռուպցիոն մարմնի մոդելը

Քննարկումը վարում էին ՄԱԶԾ Գլոբալ հակակոռուպցիոն նախաձեռնության ծրագրի ղեկավար Աիդա Արությունովան և Իրավաբանների հայկական ասոցիացիայի հակակոռուպցիոն փորձագետ Սյուզաննա Սողոմոնյանը:

Քննարկմանը մասնակցում էին ներկայացուցիչներ ՀՀ Գլխավոր դատախազությունից, միջազգային կազմակերպությունից, կուսակցություններից և ՔՀԿ-ներից:

Ի սկզբանե, մասնակիցները որոշեցին քննարկման հետագա ձևաչափը, ըստ որի՝ քննարկվեց ոչ թե հակակոռուպցիոն մարմնի կոնկրետ մոդել, այլ Հայաստանի հակակոռուպցիոն համակարգը: Ըստ այդմ, որոշվեց.

- **Ցուցաբերել համակարգային մոտեցում՝** հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինը դիտարկելով Հայաստանի հակակոռուպցիոն համակարգի մաս (այսուհետ՝ հակակոռուպցիոն համակարգ):
- **Հակակոռուպցիոն համակարգը ստեղծել միջազգային փորձի, Ջակարտայի սկզբունքների, Հայաստանի իրավական համատեքստի՝ Սահմանադրության և օրենսդրության հիման վրա:**
- Հակակոռուպցիոն համակարգը պետք է բաղկացած լինի **հակակոռուպցիոն մարմնից, դատախազության համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումից և հակակոռուպցիոն դատարանից:** Թվարկված երեք մարմինները պետք է բացառապես իրականացնեն հակակոռուպցիոն գործառույթներ, և ոչ թե համատեղեն իրենց գործառույթները այլնի հետ:
- Հակակոռուպցիոն համակարգը պետք է օժտված լինի **սահմանադրական անկախությամբ և երաշխիքներով, այդ թվում նաև անկախ լինի քաղաքական ազդեցությունից:**
- Անկախ այն հանգամանքից, թե Հայաստանը հակակոռուպցիոն մարմնի որ մոդելը կընտրի, **կոռուպցիոն հանցագործությունների քննությունը պետք է իրականացվի մեկ միասնական մարմնի կողմից:**
- Այն դեպքում, եթե Հայաստանը կընտրի ապակենտրոնացված մոդելը, **կանխարգելումը և կրթությունը պետք է իրականացվի մեկ մարմնի կողմից:**
- **Հակակոռուպցիոն մարմնի սահմանադրական անկախության հարցը** առաջին փուլում լուծելուց հետո միայն, **մասնագիտական հանրության հիմնական դերակատարների մասնակցությամբ լրացուցիչ մասնագիտական քննարկման համախոհության**

արդյունքում որոշել, թե ՀՀ-ի իրավական և մշակութային համատեքստին համապատասխան **հակակոռուպցիոն մարմնի ո՞ր մոդելը կարող է առավել արդյունավետ գործել՝ ունիվերսալ, թե ապակենտրոնացված մոդելը:**

- **Հակակոռուպցիոն համակարգի ստեղծման ընթացքում սիներգիաներ անցկացնել անցումային արդարադատության սկզբունքների հետ:**
- Ապահովել նաև սիներգիաներ այլ ռազմավարությունների և ծրագրային փաստաթղթերի հետ (օրինակ՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների, Հանրային կառավարման բարեփոխումների, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունների հետ):

Միաժամանակ, առանձնացվեց չորս հիմնական չափորոշիչ, որոնց հիման վրա նպատակահարմար է ստեղծել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինը: Մասնակիցները չափորոշիչները քննարկել և առաջարկել են հիմք ընդունելով հայաստանյան իրավական համատեքստը և մշակույթը, միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև հակակոռուպցիոն գործակալությունների մասին 2012 թվականի Ջակարտայի սկզբունքները:

Չափորոշիչ 1. Անկախություն

1) Հակակոռուպցիոն մարմինը ստեղծել միջազգային փորձի, **Ջակարտայի սկզբունքների, Հայաստանի իրավական համատեքստի՝ Սահմանադրության և օրենսդրության հիման վրա:**
2) Հակակոռուպցիոն մարմնին **օժտել սահմանադրական անկախությամբ և երաշխիքներով, այդ թվում նաև անկախություն՝ քաղաքական ազդեցությունից:**
3) Սահմանադրությամբ նախատեսել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմնի հաշվետվողականությունը և թափանցիկությունը, **նախատեսել 4 մակարդակի վերահսկողություն. խորհրդարանական, հանրային, դատախազական, «դատական»:**
4) Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում՝ **նախատեսելով կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանում և ամրագրելով անկախության երաշխիքներ:**
5) Հակակոռուպցիոն մարմինը պետք է **ղեկավարվի միանձնյա, ոչ թե կոլեգիալ կազմով:**

6) **Նախատեսել հակակոռուպցիոն մարմնի անդամների անձեռնմխելիության, նշանակման և ազատման իրավական լուրջ երաշխիքներ, ինչպիսիք առաջարկում է Ջակատայի սկզբունքները:**
7) **Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինը պետք է կրի քաղաքական պատասխանատվություն իր գործունեության համար:**

Չափորոշիչ 2. Մասնագիտացված աշխատակազմ

1) Հայաստանի հակակոռուպցիոն համակարգում ղեկավար կազմը և աշխատակազմը ձևավորվել է հստակ սահմանված չափորոշիչների վրա՝ հիմքում ունենալով **անձի մասնագիտական փորձառությունը և արհեստավարժությունը, բարեխղճությունը:**
2) Ավելացնել կոռուպցիոն գործեր քննող իրավապահ մարմինների աշխատակազմի թիվը, զարգացնելով նրանց մասնագիտական կարողությունները, այդ **թվում հակակոռուպցիոն ընկալումն ու բարեխղճության սկզբունքների կիրառումը, կոռուպցիոն հանցագործությունների քննության առումով (օրինակ՝ ապօրինի հարստացման, ֆինանսական հանցագործությունների քննության):**
3) Իրականացնել վերապատրաստումներ արդարադատության ակադեմիայի, մասնագիտացված ՔՀԿ-ների, տեղական և միջազգային փորձագետների կողմից: Համագործակցել նաև սփյուռքի հետ՝ օգտվելով նրանց մասնագիտական փորձառություններից:
4) **Տարեկան վերապատրատումների մոդուլում ներառել մասնագիտական և հակակոռուպցիոն ու բարեխղճության թեմաներ:**
5) **Հայաստանում ստեղծել տարածաշրջանային հակակոռուպցիոն ակադեմիա,** ինչպիսիք օրինակ՝ գործում են Լաքսեմբուրգում, Հոնկոնգում, Մալայզիայում: Առաջարկվող հակակոռուպցիոն ակադեմիան կարող է ծառայել առաջին տարածաշրջանային կրթական հաստատությունը, որը կվերապատրաստի հակակոռուպցիոն մտածելակերպով նոր հակակոռուպցիոն առաջնորդներ:
6) **Հիմնադրել հակակոռուպցիոն դպրոցներ և լաբորատորիաներ,** ուսումնական հաստատություններում նախատեսել հակակոռուպցիոն կրթությունը որպես կրթական մոդուլի մաս, խրախուսել այդ թեմաներով ավարտական գիտական աշխատանքների (դիպլոմային աշխատանքներ, թեզեր) պաշտպանությունը:

Չափորոշիչ 3. Ֆինանսական ռեսուրսներ

1) 2019-2022թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Հայաստանում հակակոռուպցիոն համակարգի ստեղծման նպատակով կատարել ֆինանսական հաշվարկներ և դրա հիման վրա պետական բյուջեով նախատեսել տարեկան հատկացումներ՝ հաշվի առնելով պետական բյուջեի կարողությունները և թույլատրելիության սահմանները։
2) Հակակոռուպցիոն համակարգի ստեղծման առաջնային փուլում դրամաշնորհների տեսքով ֆինանսական միջոցների ներգրավում պետական բյուջե՝ միջազգային կազմակերպություններից և սփյուռքից։
3) Պետական բյուջեով նախատեսվելիք ֆինանսական միջոցները համաչափորեն հատկացնել հակակոռուպցիոն երեք ուղղությունների զարգացման և դրանց ներքո նախատեսված գործողությունների իրականացման համար, որոնք են՝ հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիայի կանխարգելում, նախնական քննություն, դատախազական հսկողություն և դատաքննություն։

Չափորոշիչ 4. Հանրության հետ աշխատանք

1) Հանրության հետ ռազմավարական հաղորդակցության պլանների մշակում։
2) Հանրության հետ աշխատանք տանել՝ ուղիղ ժողովրդավարական (այդ թվում էլեկտրոնային) գործիքների միջոցով, այդ թվում ուղիղ շփումների, տարբեր խորհրդաժողովների, հանդիպումների, քննարկումների, մամուլի ասուլիսների, կրթական ծրագրերի և այլ միջոցառումների համատեղ կազմակերպում։
3) Ունենալ հանրության հետ աշխատելու մասնագիտացված աշխատակազմ։
4) Գործարկել և զարգացնել ազդարարման համակարգը, իրականացնել լայնածավալ հանրային քարոզարշավներ։

Քննարկում 3. «Հավաքական գործողություններ. յուրաքանչյուր շահակից (կառավարություն, ՏԻՄ, քաղաքացիական հասարակություն, մասնավոր ոլորտ, կրթություն) պետք է կատարի այն՝ նպաստելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարին»

Քննարկումը վարում էին Շերվին Մաջլեսսին՝ ՄԱԹՀՊԳ գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնության (StAR) համակարգողի տեղակալը, ՄԱԶԾ ծրագրի ղեկավար Մարինա Մխիթարյանը և ՄԱԶԾ ներկայացուցիչ Դավիթ Հարությունյանը, իսկ քննարկմանը ներկա էին միջազգային կազմակերպությունների, ՔՀԿ-ների և բիզնես ոլորտի ներկայացուցիչներ ու փորձագետներ։

Հաշվի առնելով պանելային քննարկման թեմայի ընդգրկուն լինելը, առանձնացվեցին հակակոռուպցիոն պայքար իրականացնելու գործընթացում ներգրավված հիմնական երեք դերակատարները և առաջարկվեցին դերակատարների կողմից իրականացման ենթակա միջոցառումներ.

Հիմնական դերակատարները.

- հանրային իշխանությունը՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ,
- քաղաքացիական հասարակությունը՝ ՔՀԿ-ներ և զանգվածային լրատվության միջոցներ,
- մասնավոր հատված՝ տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններ։

- **Հանրային իշխանություն՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ.**

1. **Օրենսդիր իշխանություն.**

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) **հակակոռուպցիոն պայքարին առնչվող օրենսդրական դաշտի հստակեցում,** իրավական ակտերի (այդ թվում՝ ենթաօրենսդրական) հասանելիություն և մատչելիություն, պարզ եղանակով մեկնաբանությունների և պարզաբանումների սահմանում (սույն գործընթացում պետք է ներգրավվի ոչ միայն օրենսդիր մարմինը, այլև՝ գործադիր և դատական մարմինները՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), իրավական ակտերի մասին իրազեկվածության ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում,

2) **կանխատեսելի օրենսդրության ստեղծում՝** առանց կոռուպցիոն ռիսկերի և իրավական բացերի,
3) «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝ սահմանելով մասնավոր ոլորտում կատարվող կոռուպցիոն դրսևորումների և այլ ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ ահազանգելու և դրանց ընթացքն ապահովելու հնարավորություն,
4) «Հանրային ծառայության» մասին ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում՝ **նախատեսելով հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրումը պետական մարմիններում,**
5) պետական գործունեության նկատմամբ հսկողական մեխանիզմների նախատեսում՝ հստակեցնելով պետական մարմինների համար պատասխանատվության եղանակները։

2. Գործադիր իշխանություն.

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) պետության կողմից հակակոռուպցիոն համակարգային պայքարի իրականացում՝ բացառելով իրավիճակային, հախուռն և ընտրողական սկզբունքներով կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը,
2) պետության կողմից հակակոռուպցիոն պայքարի տեսլականի հստակեցում,
3) հակակոռուպցիոն պայքար իրականացնող մարմնի լիազորությունների հստակ սահմանում՝ բացառելով կրկնությունները և վարչարարական խնդիրները,
4) պետական բյուջեով **հակակոռուպցիոն համակարգի գործունեության և հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի** համար ողջամիտ ֆինանսական միջոցների հատկացում,
5) Հայաստանի հակակոռուպցիոն համակարգի ստեղծման դեպքում նրա գործունեության արդյունավետության գնահատման գործիքների ներդրում,
6) Հայաստանի հակակոռուպցիոն համակարգի գործունեության նկատմամաբ հանրային վերահսկողություն իրականացնելու նպատակով մասնագիտացված ՔՀԿ-ների կոալիցիայի ստեղծում, զարգացում և նրանց գործունեության համար բյուջետային առանձին միջոցների հատկացում,

7) հակակոռուպցիոն համակարգի ստեղծումից հետո հակակոռուպցիոն կրթությանն ուղղված համալիր միջոցառումների ձեռնարկում՝ ներառելով հանրային ծառայության ներկայացուցիչներին և հանրությանը,
8) կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունքում բյուջե մուտք եղած ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվողականության և հրապարակայնության ապահովում,
9) հասարակության համար պետական բյուջեի ձևավորման և ծախսերի մասով մատչելիության ապահովում՝ հաշվի առնելով թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները,
10) ազդարարման մեկ միասնական հարթակի ստեղծում, դրա արդյունավետ կիրարկում։

3. Դատական իշխանություն

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) **դատական վեթթինգի իրականացում՝** ստուգելու.
   - դատավորների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից փաստացի տիրապետվող ակտիվները և դրանց ծագման աղբյուրները.
   - մասնագիտական կարողությունները/հմտությունները՝ պարզելու, թե արդյո՞ք դատավորը համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին.
   - կասկածելի կապերը, որի վերջնանպատակն է համոզվել, որ դատավորը կապված չէ կազմակերպված հանցավոր խմբերի և կոռուպցիոն սխեմաներիհետ.
2) վեթթինգի գործընթացի հետ զուգահեռ դատական իշխանության ձևավորման փուլում **դատավորներին ներկայացվող բարեխղճության և արհեստավարժության չափանիշների ընդունում,**
3) հանրության շրջանում դատավորների նկատմամբ վստահության վերականգնում,
4) դատավորների նկատմամբ պատժի անխուսափելիության սկզբունքի կիրառում։

➢ **Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և զանգվածային լրատվության միջոցներ**

1. **Քաղաքացիական հասարակական կազմակերպություններ (այսուհետ՝ ՔՀԿ-ներ)**

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) ՔՀԿ-ների մասնակցություն՝ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակման գործընթացում, վերջիններիս **կողմից ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների, Կառավարության ծրագրերի հակակոռուպցիոն բաղադրիչի կատարման գործընթացի նկատմամբ պարբերաբար մշտադիտարկման իրականացում,**
2) **ՔՀԿ-ների կողմից** միջազգային հակակոռուպցիոն չափանիշների և ներպետական օրենսդրության կարգավորումների հիման վրա **հակակոռուպցիոն ռազմավարության արդյունավետության գնահատման և մոնիթորինգի իրականացման գործիքների ներդրումը,**
3) Հակակոռուպցիոն գործողությունների իրականացման նպատակով հատկացված ֆինանսական միջոցների հակակոռուպցիոն աուդիտ՝ պետություն-ՔՀԿ համագործակցության ձևաչափով,
4) ոլորտային ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով մասնագիտացված և համապատասխան փորձառություն ունեցող ՔՀԿ-ներին պետական բյուջեից ֆինանսական միջոցների տրամադրում, այդ նպատակով վերջիններիս որոշ լիազորությունների պատվիրակում: Նպատակահարմարությունից ելնելով, սույն կետում թվարկված միջոցառումների իրականացման նպատակով մրցույթների կազմակերպում՝ պետական գնումներով սահմանված ընթացակարգերով,
5) ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև արդյունավետ երկխոսության ապահովման նպատակով կիրառելի և մատչելի հարթակների ստեղծում, **պետություն-ՔՀԿ համագործակցության շրջանակում ՔՀԿ-ների կողմից մասնագիտացված կոալիցիաների ստեղծում,**
6) քաղաքային և գյուղական համայնքների ՔՀԿ-ների մասնագիտական ներուժի և կարողությունների զարգացմանն ու ինքնակրթմանն ուղղված ծրագրերի իրականացումը, համագործակցության արդյունավետ հարթակների ստեղծում,
7) պետություն-ՔՀԿ երկարաժամկետ համագործակցության շրջանակում նույն ՔՀԿ-ների մասնակցության դեպքում՝ նրանց կողմից կատարած գործունեության մշտադիտարկման իրականացում,

2. Զանգվածային լրատվության միջոցներ (այսուհետ՝ ԶԼՄ-ներ)

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) Լրագրողական հետաքննություններ՝ վեր հանելով կոնկրետ ոլորտներում կոռուպցիոն դրսևորումները: Լինել հետևողական, որպեսզի վեր հանված կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ իրավապահ մարմինները ձեռնարկեն օրենքով սահմանված համարժեք գործողություններ, հանրության շրջանում կազմակերպել այդ նյութերի տարածումը և դրանց հիման վրա հաջողության պատմությունների ներկայացում,
2) Հակակոռուպցիոն ռազմավարության, դրա իրականացման միջոցառումների ծրագրի և կառավարության ծրագրի հակակոռուպցիոն բաղադրիչի կատարման և արդյունքների վերաբերյալ լրագրողական մշտադիտարկումներ, հետաքննություններ և խորը վերլուծություններ:

3. Մասնավոր հատված՝ տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպություններ

Առաջարկվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1) Մասնավոր հատված-Կառավարություն համագործակցություն, որը կներառի նաև բիզնես ոլորտի ներկայացուցիչների կողմից կոռուպցիոն դրսևորումների մասին ահազանգումներին հետևողական վարքագիծ և, անհրաժեշտության դեպքում, պատժիչ միջոցառումների իրականացում,
2) մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կողմից կառավարության ծրագրի հակակոռուպցիոն բաղադրիչի նկատմամբ մշտադիտարկման իրականացում,
3) ներդնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը և սրա լույսի ներքո հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերի առկայությունը բիզնես ոլորտում՝ դիտարկել իրավաբանական անձի՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու միջոց:

Համաժողովի համակազմակերպիչներ՝

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարություն

«10», Հունիս, 2019թ.